ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

Ճարտարապետության դոկտոր ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ

Վարազդատ Հարությունյանը հայկական ճարտարապետության հմուտ և վաստակաշատ երախտավորներից է։ Արդարև, հայկական ճարտարապետության վերջին կեսդարյա զարգացումը թերևս ամենահարազատ ու բազմակողմանի կերպով արտացոլված է նրա գործերում։ Գիտնականի գործունեության և գործերի հսկաք ուսումնասիրությունը ժամանակաշրջանի համար ունի ճանաչողական նշանակություն։ Որպես արդյունք իր բազմաբնույթ գործունեության, նրա գիտական օառանգությունում միահյուսվել են պատմականն ու ժամանակակիցը, մեթոդականն ու գիտահետազոտականը, փորձնականն ու տեսականը։ Նրա՝ ողջ էությամբ նվիրված մանկավարժական կյանքն ու գիտական ուսումնասիրությունների տարերքը միշտ էլ արդյունավետությամբ ընկերակցել են հասարակական և պետական գործունեությամբ։

Վ. Հարությունյանը ծնվել է 1909 թ. Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում։ Մեծ Եղեռնից փրկված՝ 1915 թ. հանգրվանել է Թիֆլիսում։ 1919—1927 թթ. սովորել և ավարտել է տեղի հայկական միջնակարգ դպրոցը։ 1927—1931 թթ. պաշտոնավարել է Լոռվա Շնող և Արճիս գյուղերի դպրոցներում։ 1931 թ. ընդունվել և 1937 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետության բաժինը ու թողնվել մանկավարժական աշխատանքի։ ՀԳԱ Պատմության և Հնագիտության ինստիտուտում ասպիրանտական տարիները և մասնակցությունը Դվինի հնագիտական պեղումներին դարձան նրա գիտական մկրտության նոր շրջանը։ 1946 թ. «Դվինի ճարտարապետական հուշարձանները» խորագիրը կրող աշխատությամբ հայցել է ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան և ստացել դոցենտի կոչում։ 1964 թ. «Հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինությունը» ատենախոսության համար նրան շնորհվել է գիտությունների դոկտորի գիտական աստիճան և միաժամանակ տրվել պրոֆեսորի կոչում։ Այսօր նա արժանացել է տասնյակ շքանշանների և պատվավոր կոչումների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի կոնդակին (1978 թ.), Թ. Թորամանյանի անվան ակադեմիական մրցանակին (1978 թ.), Ալեք Մանուկյանի շնորհակալագրին (1982 թ.), Վրաստանի ճարտարապետական ինստիտուտի պատվավոր պրոֆեսորի կոչման (1996)։ Նույն թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս և 1997 թ. ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի ստացել է Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշան

ն այլն։ Գրել է Հայաստանի ճարտարապետների միության երկարամյա նախագահը։ Երևան օրս գլխավորում է Հայաստանի հուշարձանների պահպանության ընկերությունն ու Եղբարների Սայր Ավոտի ճարտարապետական հանձնախումբը։ 1945—1990 թթ. ղեկավարել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնը։ Դիտնական մասին գոյություն ունեն շուրջ ութ տասնյակ հանձնում և ծավալուն հաղորդումներ։

Գ. Հարությունյանի գիտական ժառանգությունը ներկայացնում է երկու տասնյակից ավելի գրքեր, շուրջ երեք հարյուր քննական և նույնքան հրապարակախոսական հոդվածներ, բազմաթիվ գիտական զեկուցումներ և այլն։

Ճարտարապետության պատմության ուսումնասիրությունները առնչվում են Վ. Հարությունյանի գործերում։ Հայկական ճարտարապետության համընդհանուր պատմության կարևորագույն 22 աշխատություններից յոթը պատկանում են իր գրչին կամ ստեղծվել են իր հեղինակակցությամբ։

Վ. Հարությունյանի հայկական ճարտարապետության ընդհանուր պատմությանը նվիրված առաջին աշխատությունը «Հայկական ճարտարապետության հուշարձաններ» գիրքն է (ռուսերեն, Մոսկվա, 1951, հեղինակակից Ս. Սաֆարյան)։ Համեմատությամբ իր նախորդների, գիրքը ունի ժամանակագրական պարբերացման համապարփակ ընդգրկում։ Այն հայկական ճարտարապետությունը ներկայացնում է նախնադարից դեպի Ուրարտու, հայկական հելլենիզմ և միջնադար, ներառյալ ողջ ուշ միջնադարն ու XIX դարը։ Վ. Հարությունյանի հաջորդ «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (ռուսերեն, Երևան, 1955, հեղինակակից՝ Կ. Հովհաննիսյան) աշխատությունը նախորդի շարունակությունն է։ Գիրքը խորհրդահայ ճարտարապետության շարադրման առաջին փորձն է, որ հետագայում կատարելագործվեց Վ. Հարությունյանի և այլոց հեղինակների կողմից։ Փաստորեն, 1964 թ. ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հեղինակային կազմի կողմից հրատարակված «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» աշխատությունը հայկական ճարտարապետությունը ներկայացնում էր հնից մինչև սովետական ժամանակները, ներառյալ նաև Հայկական Կիլիկիան։

Վ. Հարությունյանի «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը (Մոսկվա, 1972, հեղինակակիցներ՝ Ս. Մ. Հասրաթյան և Ա. Մելիքյան) հասանուն վերնագրով երկրորդ աշխատությունը արդեն հստակորեն ձևակերպում էր խորհրդահայ ճարտարապետության պարբերացման՝ կազմավորման և հաստատման փուլերը, սոցռեալիզմի դազափարայնության իրենց ինքնատիպ ազգային՝ թամանյանական դիմագծերով հանդերձ։ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն» 8-հատորյակի կազմում հայ ճարտարապետության արտացոլումը մշակույթի և պատմության (այդ թվում և գաղթօջախների) համընդհանուր խորքերով, հայկական ճարտարապետության պատմության գիտական ուսումնասիրությունների ուղեցույցային կազմավորող նշանակություն ունեցավ։ Այստեղ, 3—6-րդ հատորներում տեղ գտած՝ զարգացած և ուշ միջնադարյան ու նոր շրջանի ճարտարապետության ենթամասերը նույնպես շարադրվել են Վ. Հարությունյանի կողմից, իսկ 7-րդ և 8-րդ հատորներում ընդգրկված խորհրդահայ և նորագույն շրջանների ճարտարապետության հատվածներում նրան հեղինակակից է նաև Լ. Բաբայանը։ Բնագավառի նման զարգացումը, իհարկե, հայկական ճարտարապետության ուսումնասիրության 60-ականների և 70-ականների միջազգային ծավալման արձագանքներից էր, որին մասնակից էին մի շարք խորհրդային, օտարերկրյա և Սփյուռքի մասնագետներ։ «Հայկական ճարտարապետության հուշարձանները» (Բեյրութ, 1975, պատմական ակնարկը) հայերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով հրատարակված շքեղ գիրքը Վ. Հարությունյանի և հեղինակակից Մ. Ս. Հասրաթյանի մասնակցությունն էր հայկական ճարտարապետության ուսումնասիրության նշված արձագանքներին։ Աշխատության հատկանշական կողմերից է եկեղեցական հուշարձանների ծա

պլանատարածական հատակագծերի ավելի հստակ բնորոշումը ըստ նրանց հատակագծային-տարածական ձևագոյացման առանձնահատկությունների։

1980-ականները հայկական ճարտարապետության ուսումնասիրության XX դարի աննախադեպ շրջանն է։ Անկասկած այս տարիներին է, որ կարացվեց Թ. Թորամանյանի երազած հայկական ճարտարապետության գիտահետազոտական «Կոթողան»։ Շնորհիվ հայ արվեստի ծայր առած միջազգային գիտաժողովների, Իտալիայի և Ֆրանսիայի համալսարանների հայագիտական կենտրոնների երգերը համախմբվեցին հայրենականների հետ։ Հրատարակվեցին նոր ու կոթողային աշխատություններ։ Դրանց շարքում Վ. Հարությունյանի «Հայ ժողովրդի քարե տարեգրությունը» (ռուսերեն, Երևան, 1985) աշխատությունը, շնորհիվ հայկական ճարտարապետության յուրահատուկ զարգացման միաշարժությունները բացահայտման, ավելի միասնական է, կուռ և համակ։ Սա և «Հայ ճարտարապետության պատմություն» (Երևան, 1992) աշխատությունում արտացոլված քաղաքաշինական և հուշարձանային նոր նյութերը և այլ նոր տեսակետ դրույթներ չեն, որոնք ընդհանրացրին Վ. Հարությունյանի ներդրումը առհասարակ հայագիտության մեջ։ Վերջին աշխատությունը իր տեսակի հագեցվածությամբ և հստակ համահավասարեցնելով հայկական ճարտարապետության առաջին և միակ դասագիրքն է։

Վ. Հարությունյանի և հայ ճարտարապետության ուսումնասիրության այլ հեղինակների աշխատությունները ընդարձակեցին հայկական ճարտարապետության հասկացությունների ու հուշարձանային ընդգրկումը, այն դարձրեցին բովանդակալից և հիմնավոր, ընձեռելով բոլոր հնարավորությունները շարադրելու հայկական ճարտարապետության ակադեմիական վեցհատորյա համահավաք աշխատություն, որի հեղինակների կազմում է նույնպես Վ. Հարությունյանը։

Վերոհիշյալ գործերը գիտնականի երկար տարիների ուսումնասիրությունների արգասիք են։ Դրանց արձագանքները հանդիպում են նրա տեսական, առանձին քաղաքների և հուշարձանների ուսումնասիրությանը նվիրված շուրջ երկու հարյուր հրապարակումներում։ Տեսական խնդիրներում, պատմատիպաբանական առումով պաշտամունքային շենքերի կողքին նրա հետաքրքրությունների ոլորտում է նաև աշխարհիկ ճարտարապետությունը։ Դեռևս 1940-ականներից սկսյալ նրա լույս ընծայած գործերում կան բազմաթիվ աշխարհիկ և ճարտարագիտական կառույցների հանգամանալից ու նորարարական ուսումնասիրություններ։ Դրանցից է, օրինակ, «Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները» (Երևան, 1960) գիրքը, որը բովանդակում է տասնյակ նոր չափագրություններ և տալիս է խնդրո առարկա կառույցների դասակարգումն ու առանձնահատկությունները Հայաստանում։ Այս և աշխարհիկ շենքերին նվիրված հեղինակի բազմաթիվ այլ հոդվածները նոր առաջընթաց էին միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության ուսումնասիրության գործում։

Վ. Հարությունյանի նախասիրած թեմաներից մեկը հայկական ճարտարապետության «ժառանգորդության» և «ավանդների շարունակականության» հիմնախնդրի ուսումնասիրումն է։ Մեկ տասնյակի հասնող հոդվածների այս խմբում հեղինակը գտնում է, որ, պայմանավորված հնագույն ավանդներով, հայկական հելլենիզմի հուշարձանները ունեն յուրահատուկ համաչափություն։ Նա ճշգրտորեն ցույց է տալիս, որ IX—XI դարերի հայկական հուշարձանների ոճական հասունացման փուլին բնորոշ է նաև անտիկ ձևերի և վաղ միջնադարյան տարածական լուծումների ստեղծագործական կրկնությունը։

Զարգացնելով Ն. Մառի, Յ. Ստրժիգովսկու և հատկապես Թ. Թորամանյանի տեսակետները, Վ. Հարությունյանը ավելի է խորացնում հայ-վրացական ճարտարապետական փոխառնչությունները։ Նա վրաց ճարտարապետ Գեորգի Չուբինաշվիլու «Որոնումներ հայկական ճարտարապետության մասին» (ռուսերեն, Թբիլիսի, 1967) աշխատության խեղաթյուրումներին որպես պատասխան գրված գրքի հեղինակներից մեկն է և գմբեթավոր բազիլիկնե

ին, գմբեթավոր դահլիճներին ու Թալինի մեծ տաճարին վերաբերող Լեթամասերի շարադրողը։

Հայկական առանձին պատմաճարտարապետական կոթողների և քաղաքաշինական հուշարձանների ուսումնասիրությունը Վ. Հարությունյանի տարերքն է։ Այստեղ է, որ միահյուսվում է նրա գիտական և պրոպագանդիստական գործունեությունը։ Անդրադառնալով հանդերձ հայկական ճարտարապետության հին ու նոր կարևորագույն շենքերին և բնակավայրերին, ալնուամենայնիվ, գիտնականի հետաքրքրությունները կենտրոնացել են Արուճի, Դվինի, Զվարթնոցի, Էջմիածնի, Անիի և Երևանի շուրջ։ Դրացից ամենավաղ «Արուճ, Աբեղայի թվագրության դարցի շուրջ» հոդվածը (1946 թ.), ինչպես իրավացիորեն նկատում է հեղինակի կենսագիրներից Ս. Ս. Հասրաթյանը, մի ավանգ էր միջնադարյան հայ ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում և մինչև օրս չի կորցրել թարմությունը։ Դվինի կապակցությամբ հրատարակված զանազան հոդվածները տավաք կերպով ներդրվել են «Դվին, V—VI-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները» (Երևան, 1950) աշխատության մեջ։ Այստեղ Վ. Հարությունյանը հստակորեն ճշգրտում և շրջանառության մեջ է դնում Թալինի մեծ տաճարի նախատիպ Սբ. Գրիգոր տաճարը. Կարևոր նկատում է հեղինակի՝ Դվինի կաթողիկոսական պալատի վերակազմությունը, որ ուղեցույց հանդիսացավ կառույցի զուգահեռների հետագա սեկնաբանության համար։ Հուշարձանների վերաբերյալ հրատարակված նյութերից որպես առանձին մենագրություն հրատարակվել են «Մակարավանք»-ը (ասդլերեն և իտալերեն, Հայկական ճարտարապետության վաղագրքեր, Ս. Վենետիկ, 1993, հեղինակակից Ֆ. Գոնդոլֆո) և «Երևանի եկեղեցիները» (Երևան, 1997)։ Սա և մամուլում տպագրված Երևանի արդի ճարտարապետության տասնյակ շենքերի մասին նյութերը Մոսկվայում 1968 թ. հրատարակված «Երևան» աշխատության հետ (ռուսերեն, հեղինակակիցներ՝ Ս. Ս. Հասրաթյան, Ա. Ա. Սելիքյան) Վ. Հարությունյանին դասում են Երևանն ուսումնասիրող գլխավոր հեղինակների շարքը։ Բարձր սակարդակով է շարադրված նաև «Անի քաղաքը» (հրատարակված հայերեն և ռուսերեն տարբերակներով, Երևան, 1964) աշխատությունը։ Դիրքը բացի նրանից, որ ի սի է բերում գոյություն ունեցող նյութերը, առաջին անգամ լինելով, հետազոտման խնդիր է դարձնում Անիի քաղաքաշինությունն ու կառուցապատումը։

Վ. Հարությունյանի մանկավարժական գործունեությունը նրա գիտական կյանքի անքակտելի մասն է։ Նա բազմաթիվ մեթոդական դասընթացների հեղինակ է։ «Հայ ճարտարապետության պատմություն» դասագրքից առաջ նա հրապարակել էր «Հին աշխարհի ճարտարապետության» դասընթացը (Երևան, 1978)։ Այն, լինելով անձամբ կատարված այցելությունների արդյունք, շարադրված է միանգամայն յուրովի։ Հեղինակը հաջող կերպով կարողացել է աշխատություն ներմուծել նույն ժամանակների հայկական ժառանգությունը ևս։ Նշված և դեռևս անտիպ «Գեղեցիկի զարմանահրաշ քառուղիներում» դասագրքերին բնորոշ է նյութի մանկավարժական հմուտ մատուցումը։ Վ. Հարությունյանի մեթոդական գործերին շուք է հաղորդում նրա վերջին տարիների, հասունությամբ շարադրված «Հուշարձանների վերականգնման մեթոդիկա» դասագիրքը։

Վ. Հարությունյանի մեծ ավանդներից է նաև ճարտարապետների տասնյակ սերունդների հայեցի դաստիարակությունը և հայկական ճարտարապետության մասնագիտությամբ կադրերի պատրաստումը։ Շուրջ երեք տասնյակ հայրենի և սփյուռքահայ ճարտարապետներ, նրա մոտ անցնելով հայ ճարտարապետության մասնագիտացման կուրսերը, հայցել են թեկնածուական և դոկտորական գիտական աստիճաններ։ Նա որպես Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի և հետագայում Ճարտարապետա-շինարարական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնի վարիչ կարողացել է ստեղծել ճարտարապետական կրթության ազգային ավանդներով հարուստ մասնագիտական դպրոց։

Ողջ կյանքում Վ. Հարությունյանը գրչով և գործով մասնակից է եղել հուշարձանների պահպանությանը Հայաստանում։ Հուշարձանների պահպանության վերաբերյալ նրա դրապարակումները մի դեպքում բրավշապես տեղեկություններ են, մյուսում՝ կազմակերպչական և բողոքի լոսք։ Վ. Հարությունյանի՝ պատմական հուշարձանների պրակտիկայում զբաղվող բազմաթիվ հաղորդումները, Վազգեն Ա կաթողիկոսի շրջաբերական գործունեությանը նվիրված «Նկայք ՀԱՆՍՍՍՈՒՔ» (Երեբունի հրատ., 1988) և «Ս. Էջմիածնի շրջաբեր գաւակները» (Ս. Էջմիածին, 1996) աշխատությունները բնագավառի գիտական ժամանակագրություն են։

Չնայած առաջացած տարիքին, Վ. Հարությունյանը վերջին տարիներին ակտիվ հրատարակչական գործունեություն է ծավալում։ Թեմաները հիմնականում գեղարվեստական ոգով գրված ճամփորդական և կյանքի հուշագրություններ են։ Մեծ հետաքրքրությամբ են կարդացվում «Նախնյաց ոտնահետքերով» (Երևան, 1995), «Հոսփորի և Մարմարայի ափերով» (Երևան, 1996), «Անմոռաց հանդիպումներ» (Երևան, 1998), «Կյանքիս քառուղիներում» (Երևան, 1999) և այլ գործեր։ Պարզ և մատչելի ոճով շարադրված նշված գրքերը ունեն ժամանակն ու միջավայրը պատկերող վարպետություն։ Արագ ակնարկանգամ գիտնականի գործերի ցանկին բավական է նկատելու 170-ից ավելի հոդվածների շարքը՝ նվիրված հեղինակի արվեստակից ժամանակակիցների ստեղծագործական կենսագրություններին։ Հակիրճորեն յուրաքանչյուր անհատի ստեղծագործական կարողությունները բացահայտող հարությունյանական գրիչը շատ վարպետ է և չհոգնող։ Նա տասնյակ հոդվածներ է նվիրել հայկական ճարտարապետության առանձին վառ անհատականությունների, ինչպիսիք են Թ. Թորամանյանը, Ալ. Թամանյանը, Կ. Հալաբյանը, Ռ. Իսրայելյանը և շատ ուրիշներ։

Վ. Հարությունյանի գիտական ժառանգությունը լայնահուն է ու բազմաբեղուն։ Գիտնականը ողջ կյանքով նվիրվել է հայկական ճարտարապետության ուսումնասիրության և հայ ճարտարապետների սերունդների աճեցմանը։ Նրա բազմավաստակ գործունեության ջանքերով կատարելագործվեց հայկական ճարտարապետության ազգային կաճառը՝ որպես մասնագիտական կրթության և ուսումնառության, գիտահետազոտական կարևոր պահպանության ոլորտ։